



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«20» 04 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0065-23

Ձեռնարկողը՝

«Ֆանտոմ Գրուպ» ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր 39 /1Ա/

Գործունեությունը՝

Սյունիքի մարզի Սիսիանի բազալտների հանքավայրի
արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0065-23

«20» 04 2023թ.

Սյունիքի մարզի Սիսիանի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ «Ֆանտոմ Գրուպ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն,
/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Սյունիքի մարզ, Իշխանասար բնակավայր

Ներածական մաս. Սիսիանի բազալտի հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում, Իշխանասար գյուղից մոտ 700մ հյուսիս-հյուսիս-արևմուտք, Շաքի բնակավայրից մոտ 2.1կմ հյուսիս-արևելք: Հեռավորությունը հայցվող տարածքից մինչև Իշխանասար գյուղի մոտակա բնակելի շինությունները կազմում է 260-290մ, մինչև Երևան-Մեղրի միջպետական նշանակության ավտոճանապարհը՝ մոտ 590մ: Հայցվող տարածքից 50-80մ հարավ գտնվում են պտղատու այգիներ: Հանքավայրը գտնվում է Սիսիան քաղաքից մոտ 7կմ հեռավորության վրա: Հանքավայրի մոտակա բնակավայրերից են Սիսիան, Աղիտու, Վաղուդի, Շաքի, Նորավան գյուղերը: Վարչատարածքային բաժանման տեսակետից հանքավայրի տարածքը ներառված է Սիսիան խոշորացված համայնքում:
Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Սյունիքի մարզի Սիսիանի բազալտների հանքավայրի հետախուզումը կատարվել է հորատանցքերով, մաքրվածքների զուգորդմամբ, օգտագործելով մերկացման և փորձնական բացահանքի երկրաբանական տվյալները: Սիսիանի բազալտի հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի Երկրաբանական վարչության ՊՏՀ 1967 թվականի ապրիլի 29-ի №159 արձանագրությամբ: Բազալտների հաստատված պաշարները ըստ A կարգի կազմում են 629.6հազ.խմ, ըստ B կարգի՝ 1494.2 հազ.խմ, ըստ C1 կարգի՝ 1417.3հազ.խմ: Բլոկների ելքը 25%: «ՖԱՆՏՈՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրամադրվող տեղամասում պաշարները կազմում են՝ ըստ B կարգի՝ 458500խմ, ըստ C1 կարգի՝ 1405800խմ: Ըստ B + C1 կարգերով՝ պաշարները կկազմի 1864300խմ:



Սույն նախագծով նախատեսվում է՝ հանքավայրը մշակել բաց եղանակով տարեկան՝ 93215խմ արտադրողականությամբ մարվող պաշար:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով նախնական փխրեցմամբ՝ EC300DL VOLVO էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝ ամենամեծ երկարությունը – 700մ, ամենամեծ լայնությունը – 480մ, օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը տեղամասում– 10.7մ, մակաբացման ապարների միջին հզորությունը–2.2մ, օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝-1864.3հազ.խմ, մարվող պաշարների տարեկան քանակը՝-93215խմ, արդյունահանվող պաշարների քանակը՝-1776.5հազ.խմ, արդյունահանվող պաշարների տարեկան քանակը՝- 88825խմ, մակաբացման ապարների քանակը– 531.6հազ.խմ, բացահանքի օտարման տարածքը կազմում է 24.165հա: Հանքավայրի բազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունները բավարարում են «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից: Տեխնիկական պայմաններ» ՀՍՍ 100-62 և «Պատքարեր լեռնային ապարներից: Տեխնիկական պայմաններ» ԳՈՍՍ 4001-58 պահանջներին:

Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքային ռեժիմն ընտրվել է ելնելով տեխնիկական առաջադրանքից և կլիմայական պայմաններից: Նախատեսվում է հանությանին աշխատանքներն իրականացնել շուրջ տարի՝ աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր, աշխատանքային օրերի թիվը շաբաթվա ընթացքում՝ 5 օր հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ, հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ: Բացահանքի ծառայման ժամկետը 20 տարի:

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով՝

- | | |
|----------------------------------|----------------------------------|
| 1. Y=8588169.1561 X=4382799.2854 | 5. Y=8588615.9686 X=4382772.2754 |
| 2. Y=8588276.3113 X=4383037.8025 | 6. Y=8588591.0461 X=4382643.3878 |
| 3. Y=8588658.1366 X=4383161.9459 | 7. Y=8588115.5044 X=4382711.7485 |
| 4. Y=8588955.7965 X=4382907.1734 | 1. Y=8588169.1561 X=4382799.2854 |

Հանքավայրը ծածկող ապարներն են մակաբացման ապարները, ընդհանուր քանակը բացահանքում կազմում է 531600խմ, որից 106300խմ ծավալով հողաբուսական շերտ է և 425300խմ ծավալով դելյուվիալ նստվածքներ բազալտի կտորներով: Մակաբացման ապարների հզորությունը տատանվում է 1.0-3.0մ-ի սահմաններում, կազմելով միջինը բացահանքում՝ 2.2մ: Հողաբուսական շերտի և բազալտի կտորներով դելյուվիալ նստվածքների միջին հզորությունը կազմում է համապատասխանաբար 0.44մ և 1.76մ:

Հողաբուսական շերտի N1 լցակույտը բացահանքի մշակման սկզբնական շրջանում նախատեսվում է ձևավորել բացահանքի վրա՝ նրա կենտրոնական մասում, իսկ բազալտի



կտորներով դեյուվիալ նստվածքները տեղափոխել ժամանակավոր N2 լցակույտ, որը գտնվում է N1 լցակույտի հարևանությամբ: Վերջիններս հետագայում տեղափոխվելու են ներքին լցակույտ: Հետագայում, հնարավորություն ստեղծվելուց հետո, այսինքն տվյալ հանքաստիճանը կամ նրա մի մասը մինչև հատակը շահագործվելու դեպքերում՝ շահագործմանը զուգընթաց մակաբացման ապարները տվյալ տարածքին անհրաժեշտ քանակությամբ՝ 2.3մ բարձրությամբ կլցվեն բացված հատակների վրա և կհարթեցվի, կկատարվի ներքին լցակույտառաջացում: Մակաբացման ապարների 120000խմ-ը կտեղափոխվի լցակույտեր բուլդոզերով, իսկ 411600խմ-ը ավտոինքնաթափով:

Պարճառաքանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ազգային անվտանգության ծառայությանը, կադաստրի կոմիտեն, Սյունիքի մարզպետարանը, որոնց կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության փուլում: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննության գործընթացում վեր են հանվել հետևյալ հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել եզրակացության կազմման համար.

1. Ըստ կադաստրի կոմիտեի կարծիքի՝ նշված հողամասը էլեկտրոնային կադաստրային քարտեզում տեղադրելիս համադրվում է պետական, համայնքային, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական, ջրային, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասերի հետ:
2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջների հաշվետվությունում «Պատմության և մշակույթի հուշարձաններ» բաժնում բացակայում է հայցվող 24,165 հեկտար մակերեսով հողատարածքում կատարված հնագիտական ուսումնասիրությունների եզրակացությունը:
3. Ներկայացված «Էկո Ցենտր» համակարգչային ծրագրով կատարված հաշվարկը ցույց է տալիս, որ 6 արտանետվող նյութերից 3-ի դեպքում՝ փոշի, ծծմբի երկօքսիդ և ածխաջրածիններ, գրանցվում են ՍԹԿ-ի գերազանցումներ 3-ից 73 անգամ, մինչդեռ ՇՄԱԳ-ի և հավելվածի նախաբանի տեքստային մասում նշվում է, որ ՍԹԿ-ի գերազանցում չկա:
4. Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների անհրաժեշտ է ներկայացնել աղտոտող նյութերի արտանետումները ցրվելու արդյունքում գետնամերձ շերտում՝ արտանետվող կազմակերպության տարածքի եզրին, սանիտարապաշտպանական գոտու սահմանի եզրին և ամենամոտ բնակելի տարածքներում ՍԹԿ-ի մասնաբաժնով:



5. Հաշվետվությունում չի ներկայացվել տեղեկատվություն հայցվող տարածքին մոտ գտնվող օրգանական մեղվաբուծությամբ զբաղվող անհատների և ընկերությունների հեռավորությունը, մեղվաբուծարանի վրա հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումները, ինչպես նաև հայցվող տարածքից մոտ 50-80 մետր հեռավորությամբ գտվող պտղատու այգիների վրա հնարավոր ազդեցությունները:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները «Ֆանտոմ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Սյունիքի մարզի Սիսիանի բազալտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
գլխավոր մասնագետ՝



Վարդան Հարությունյան